ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԵՎ
ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻԻ ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամը (այսուհետ՝ Կողմեր),

մտադիր լինելով խորացնել Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև 1997 թվականի մայիսի 3-ին ստորագրված «Կրթության և գիտության ոլորտներում համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակում ձևավորված հետազոտությունների և տեխնոլոգիաների ոլորտում համագործակցային կապերը,

նպատակ ունելալով խթանել երկկողմ համագործակցության ծրագրերի իրականացումը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

ցանկանալով նպաստել Հայաստանի և Վրաստանի համատեղ նախաձեռնությունների հաջողությանը Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության ծրագրի շրջանակում և այլ միջազգային հարթակներում,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված I

Նպատակ

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակում Կողմերը կխթանեն երկու երկրների գիտական համայնքների միջև համագործակցային կապերի ամրապնդումը:

Սույն Մտադրությունների հուշագրի նպատակն է ձևավորել և ամրապնդել գիտնականների և գիտահետազոտական խմբերի միջև համագործակցությունը՝ ապահովելով ենթակառուցվածքների փոխադարձ օգտագործումը:

Կողմերը կխրախուսեն գիտական տվյալների և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև երկուստեք կաջակցեն հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացմանը:

Կողմերը կխրախուսեն գիտական անձնակազմի փոխանակումը՝ առաջնահերթությունը տալով երիտասարդ գիտնականներին:

Հոդված II

Համագործակցության ձևեր

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

ա) համատեղ հետազոտական ծրագրեր,

բ) հետազոտողների շարժունությանն ուղղված համատեղ ծրագրեր,

գ) համատեղ գիտագործնական հանդիպումներ, սեմինարներ, գիտաժողովներ:

Կողմերի համաձայնությամբ կարող են ներառվել համագործակցության այլ ձևեր:

Կողմերը կհամակարգեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ հետազոտական նախաձեռնությունների համաֆինանսավորումը յուրաքանչյուր համագործակցության ձևի համար կիրառելի առանձին մոտեցմամբ՝ ելնելով համապատասխան ֆինանսավորման մեխանիզմներից:

Համագործակցության յուրաքանչյուր ձևի մանրամասները և Համագործակցության ծրագիրը կսահմանվեն Կողմերի կողմից: Կողմերը կվերանայեն Համագործակցության ծրագիրը առնվազն երկու տարին մեկ անգամ:

Կողմերը կմշակեն համատեղ առաջարկներ՝ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության ԵՄ նոր շրջանակային ծրագրին համատեղ մասնակցության համար:

Հոդված III

Ֆինանսավորմանն առնչվող հարցեր

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակում նախատեսվող համագործակցությունը կիրականացվի Կողմերի կողմից՝ յուրաքանչյուր Կողմի բյուջետային հնարավորությունների սահմաններում՝ առանց Հայաստանի Հանրապետության և Վրաստանի պետական բյուջեներից լրացուցիչ միջոցների ներգրավման անհրաժեշտության:

Կողմերից յուրաքանչյուրը կհոգա իր երկրի ներկայացուցիչների մասնակցության ծախսերը: Նախագծերի, գիտագործնական հանդիպումների և համագործակցային գործունեության այլ ձևերի թիվը կհաստատվի երկու տարին մեկ անգամ վերանայված Համագործակցության ծրագրով, որը պայմանավորված կլինի Կողմերի ֆինանսական հնարավորություններով:

Հոդված IV

Կանոնակարգերի պահպանում

Մասնակցող գիտնականները կհարգեն ընդունող երկրի օրենքները և հյուրընկալող հաստատությունների կանոնակարգերը:

Հոդված V

Մտավոր սեփականություն

Համագործակցության ընթացքում ձեռք բերված գիտական և գիտատեխնիկական տեղեկատվությունը Կողմերը հասանելի կդարձնեն համաշխարհային գիտական հանրությանը՝ տեղեկատվության տարածման ընդունված ուղիներով՝ երկու երկրների ազգային օրենսդրության համաձայն:

Սույն Մտադրությունների հուշագրի շրջանակում իրականացվող համագործակցային գործունեության ընթացքում ստացված կամ փոխանցված մտավոր սեփականության պաշտպանության կարգը կսահմանվի Համագործակցության ծրագրով, եթե Կողմերը այլ բան չեն նախատեսել գրավոր համաձայնությամբ:

Հոդված VI

Այլ դրույթներ

Սույն Մտադրությունների հուշագրով չնախատեսված վարչական ընթացակարգերը և համագործակցության իրականացման մանրամասները կսահմանվեն Համագործակցության ծրագրով կամ Կողմերի միջև նամակագրությամբ:

Սույն Մտադրությունների հուշագրի մեկնաբանման և դրա կիրառման ընթացքում ծագած տարաձայնությունները կլուծվեն բարեկամաբար՝ Կողմերի միջև ուղիղ բանակցությունների կամ խորհրդակցությունների միջոցով:

Սույն Մտադրությունների հուշագիրը կկիրառվի Հայաստանի Հանրապետության և Վրաստանի օրենսդրությանը, ինչպես նաև կիրառելի միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Հոդված VII

Ուժի մեջ մտնելը, փոփոխությունները, դադարեցումը

Սույն Մտադրությունների հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և վավեր է չորս տարի ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է մյուս Կողմին ծանուցել այն դադարեցնելու իր մտադրության մասին՝ սույն Մտադրությունների հուշագրի գործողության ժամկետի ավարտից առնվազն վեց ամիս առաջ: Այս պարագայում ընթացքի մեջ գտնվող ծրագրերը կհասցվեն իրենց ավարտին: Սույն Մտադրությունների հուշագրի գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա չորս տարիների համար, եթե առկա չէ Կողմերից մեկի՝ այն դադարեցնելու մասին ծանուցումը:

Սույն Մտադրությունների հուշագրի դրույթները կարող են փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ:

Սույն Մտադրությունների հուշագրի կիրառման ընթացքում ծագած տարաձայնությունները կլուծվեն բարեկամաբար՝ Կողմերի միջև ուղիղ բանակցությունների կամ խորհրդակցությունների միջոցով:

Կատարված է ք. Թբիլիսիում, 2022 թ. հոկտեմբերի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, վրացերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Մտադրությունների հուշագրի մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ՝

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

ՎՐԱՍՏԱՆԻ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻԻ
ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ՝

ՋԱԲԱ ՍԱՄՈՒՇԻԱ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ